

1. **Պատմություն**: ---Ինչքան էլ շարունակենք հայրենասիրական խաղատեսակներ հորինել ու գաղափարախոսական թակարդներ լարել, միևնույն է, ամեն անգամ ծուղակում պատմությունն է հայտնվելու, իսկ մշակույթը (բարձր իմաստով) թևածելու է հեռուներում: Պատմությունն ու մշակույթը երբեք հոմանիշ չեն դառնալու, իրար մեջ չեն ներառվելու, հակադիր են լինելու` ինչպես ներքևն ու վերևը: Այսպես է, որովհետև իրարանցում-իրադարձություն-պատմություն նշանաշարը Կարգից դուրս է, տրամաբանությամբ է առաջնորդվում, իսկ տրամաբանական ամեն մի ընթացք, իբրև կանոն, սկիզբ է առնում հարաբերական ելակետից, տևում պայմանական բաղադրիչների փոխհարաբերությունների շնորհիվ և ... իրական ավարտ ունենում: Ընդ որում, կարևորը ոչ այնքան արդյունքն է, որքան տրամաբանական հերթական շղթայի տրամաբանված (տրամաբանորեն արդարացված) լինելը: Սրա մեջ չէ՞ թաքնված պատմության ողբերգականությունը: Կամ` նաև սրա` մեջ...

Լռություն-բանաստեղծություն-մշակույթ նշանաշարը մտածողության ոլորտում է, որտեղ պայմանականությունը էական դերակատարում չունի: Մտածողությունը կարգ է, ասել է թե` ամեն ինչ ի սկզբանե և ի վերջո մտածված է, հայտնի է ու կանխատեսելի: Կամ պարտավոր է այդպիսին լինելու: Իրարանցումը, իրադարձությունը և պատմությունը համարժեք, համանշանակ ու համընկնելի չեն, չեն կարող փոխարինել իրար, քանի որ տրամաբանության ընթացքն աստիճանական է, ուրեմն` հաջորդաբար անհետացող. – հաջորդ քայլը նախորդի շարունակությունն է, բայց ժառանգը կամ գենետիկ կրկնությունը չէ: Լռությունը, Բանաստեղծությունը, Մշակույթը համարժեք են ու կարող են փոխարինել իրար. – Մշակույթը տեղավորվում է Լռության մեջ, Բանաստեղծությունը համընկնում է Մշակույթին, մինչդեռ պատմությունը չի կարող տեղավորվել իրադարձության կամ իրարանցման մեջ: Ավելին` Բանաստեղծությամբ ճանաչելի է Մշակույթը, իրադարձությամբ պատմությունը չի ճանաչվում, որովհետև պատմությունը իրարանցումների և իրադարձությունների շարք է ու նրանց պարբերական ավարտը: Կնշանակի` պատմությունը նաև բազում սկիզբ-սկսվածքներ ունի: Լռությունը, Բանաստեղծությունը, Մշակույթը անսկիզբ են ու անվերջ, անընդհատելի (համենայն դեպս` սկիզբն ու վերջը անհայտ են ու ենթադրելի չեն):

2. **Պատմության մեջ ամեն ինչ հնարավոր է այն պատճառով, որ ենթարկվում է տեսնում եմ-չեմ տեսնում, ընդունում եմ – չեմ ընդունում և այստեսակ այլ հակադրություններին**: Լռություն-Բանաստեղծություն-Մշակույթ համակարգի համար գավեշտական ձևիմաստ կրող **ՊԵՍ** են պատմությունը` բացականչությունը տրամաբանորեն ճիշտ է, քանի որ անթերի կեցվածք է և, ուրեմն, դուրս է որևէ կարգից: Իրերը, տվյալ դեպքում` ես-ը, պատմությունը, **ՊԵՄ**` բայական կամուրջը, իրենց նշանակությամբ, դիրքով, դերակատարումով պատմության մեջ կարգ չեն ձևավորում, որովհետև նրանք տրամաբանության տրամադրությունից կախված տարաբնույթ պայմանականություններ են սուկ: Իրերը կարգավոր են, երբ հայտնվում են Լռություն-Բանաստեղծություն-Մշակույթ ոլորտում:

«Ես բառ են դարձել» շշուկն արդեն կեցվածք չէ, այլ մշակութաբանական գործողություն. Լռության սահմաններում իրականացվող անընդհատական «Ինքնասպանություն»- փոխակերպում է: Պատմության մեջ դառնում են (խոլոպ, հերոս, արքա...), կեցվածք են ընդունում. – պատմությունն ի վերջո տարածություն է, որտեղ ամեն ինչ պիտի երևա.

անտեսանելի, առանց թոզ ու դումանի պատմություն գոյություն չունի: Լռություն-Բանաստեղծություն-Մշակույթ հյուսվածքին բնորոշ է տարրալուծվելը, անէանալը, փոխաբերվելը...

Պատմությունն ու Բանաստեղծությունն այսպիսով չեն կարող ներառվել իրար մեջ փոխձանաչելի ու փոխգիտակցելի չեն: Եթե «Ես են պատմությունը» ծրագրային ելույթը բեմականացվի Լռության սահմաններում՝ աղմուկ-աղաղակ է առաջանալու, իսկ երբ «Ես բառ են դարձել» աղոթատողը հնչի տեսանելի տարածության մեջ, զուտ բանաստեղծական գործողությունն ընկալվելու է որպես քաղաքակրթական հետևանք: □ Ինքնասպանությունը նշանակում է պարտվել հասարակությունից՝ - տեղափոխվելով պատմության տարածք՝ «Ես բառ են դարձելը» հենց այս իմաստն է ձեռք բերելու: Մինչդեռ

Լռություն-Բանաստեղծություն-Մշակույթի ինքնաբավ ներկայությունը հասարակության պարտությունն է ենթադրում: Պատմությունն Ինքնասպանություն չի ընդունում, պատմական գործողությունների պսակը հերոսական մահն է. առանց վերջինի պատմությունը կվերածվի անանուն իրերի խառնակույտի: Մեծ հաշվով, պատմությունը Մահն է: Խաղաղ, անաղմուկ պատմություն չի լինում, այդ պատճառով էլ Պերիկլեսի Աթենքը Մշակույթի մեջ է:

Ամեն մի հերոսական մահով պատմությունը շունչը վերականգնում ու վերագտնում է իր իմաստը: «Ես բառ են դարձել» կարգի մշակութաբանական ամեն մի Ինքնասպանությամբ նեկրոֆիլ Պատմությունն ու հերոսական մահվան արձագանքով իբր-կենդանի հասարակություն-ամբոխն անակնկալ սայթաքում է քառասուն գագ խորություն ունեցող հորի մեջ և անշնչանում Բացահայտվող Ինքնության շողարձակումից...

3. □□□□ :---Ճակատագիրը թաքնված-թաքցված կենսագրությունն է: Բանաստեղծությունը փորձ է ընթերցելի դարձնելու Երկնքում գրառված ճակատագրերը: Վերծանման գործողությունն իմացական հմայք ունի, քանի որ ճակատագրերի վերծանման տևողությունը սկիզբ է առնում Երկնային Ջրերի Տեղատվության պահերին, երբ հանդիպում են բանաստեղծն ու ափհանված բառերը: Ավաղ, նահանջելիս Երկնային Ջրերն իրենց հետ որևէ բան չեն տանում: Այդ պատճառով էլ Այնտեղ Լռում են Այստեղ Գրվածի մասին, և անգամ հաջողված (մեր կարծիքով) փորձերը չեն դառնում Այնտեղի Կենսագրության գոնե մեկ պարբերությունը...

Իմացական հմայք են ասում, քանի որ ոչ մի վերծանում անկասկած ու վերջնական չէ: □ Կարևորը ճանապարհն է'...□ Ես բառ են դարձել՝ մշակութաբանական Ինքնասպանությամբ նշանավորվում են պատմության ու հասարակության պարտությունը բանաստեղծությունից և բանաստեղծության պարտությունը Երկնքից: Սա անփոփոխ ու հավերժական Կարգ է...

* - Նաիրա Համբարձումյան □ Ես բառ են դարձել՝, 2008թ, Երևան: Իմ դիտարկումներին համապատասխանող բանաստեղծությունները կարող եք ընթերցել նշված գրքում: